ՈՐՈՇՈՒՄ

Կատարողական վարույթը կասեցնելու մասին

«19» հունվար 2022թ. **ք.Երևան**

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության, Աջափնյակ, Դավթաշեն և Արաբկիր վարչական շրջանների բաժին, ավագ հարկադիր կատարող արդարադատության մայոր Անդրանիկ Ավագյանս ուսումնասիրելով «24» ապրիլ 2021թ. վերսկսված թիվ 01771712 կատարողական վարույթի նյութերը

ՊԱՐԶԵՑԻ

Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վար.շրջ.ընդհանուր իրավ.դատարան-ի կողմից «27» փետրվար 2017թ. տրված թիվ ԵԱՔԴ/5967/02/15 կատարողական թերթի համաձայն պետք է Համլետ Ռոբերտի Համբարձումյան-ից հօգուտ Յունիբանկ ԲԲԸ-ի բռնագանձել 5555 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ և տոկոսներ:
Կատարողական գործողությունների ընթացքում արգելանք է կիրառվել պարտապան Համլետ Համբարձումյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող ք.Երևան, Կոմիտասի պող 45/1 շենքի, թիվ 63 բնակարանի վրա և <<OPEL ASTRA 1.4>> մակնիշի 1994թ. արտադրության 27 OL 459 պետ.համարանիշի ավտոմեքենայի վրա, պարզվել է նաև, որ պարտապանին պատկանող ք.Երևան, Կոմիտասի պող 45/1 շենքի, թիվ 63 բնակարանը հանդիսանում է գրավի առարկա Արարատբանկ ԲԲԸ-ում:
Ամինտաս Գրուպ ՍՊԸ-ի եզրակացության համաձայն նշված անշարժ գույքի շուկայական արժեքը կազմում է 34.400.000 ՀՀ դրամ:
Պարտապան Համլետ Համբարձումյանի վերաբերյալ Ծառայությունում առկա են հարուցված այլ կատարողական վարույթներ որոնց շրջանակներում ի հայտ են եկել սնանկության հատկանիշներ:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28, 28.1 և **37.8** հոդվածներով

ՈՐՈՇԵՑԻ

1. Կասեցնել «24» ապրիլ 2021թ. վերսկսված թիվ 01771712 կատարողական վարույթը:

Որոշման պատճենը ուղարկել կողմերին:
Հարկադիր կատարողի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ երկամսյա ժամկետում, կամ վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետներում:
«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի 5-րդ մասի համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

ավագ հարկադիր կատարող արդարադատության մայոր Անդրանիկ Ավագյան

ë ï áñ ³ · ñáõÃÛáõÝ`

Digitally signed by
AVAGYAN
ANDRANIK
3811860712
Date: 2022.01.19
11:17:05 AMT